ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1957 Общественные науки

Ս. Բարխուդարյան

# ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Պետերբուրգի համալսարանը փայլում էր իր բանասիրական և արևելագիտական ֆակուլտետներով։ Այդտեղ իրենց հիանալի դասընթացներն էին կարդում համաշխարհային այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպես Ժեբելյեն, Բարտոլդը, Մառը և ուրիշները։

Գիտության այդ աստղերը դեպի իրենց էին ձգում ռուսական ընդարձակ կայսրության բոլոր կողմերից ուսումնածարավ և տաղանդավոր պատանիներ։

1904 թ. ուսումնական տարվա սկզբին Պետերբուրգի համալսարանի հինավուրց և մռայլ կամարների տակ երևաց բոցավառ աչքերով, նռան հատիկի պես ալ ու թափանցիկ շրթունքներով, սաթի նման սև ու խիտ մազերով 17-ամյա մի պատանի, որն իր հետ բերել էր իր հինավուրց ժողովրդի իմաստությունն ու աշխատասիրությունը, իր հայրենիքի թեժ արևի ճառագայթներով առլեցուն ջերմ ու վառվռուն սիրտը։

Նա հասակ էր առել հնադարյան Կովկասի բազմազգ ժողովուրդների խաչմերուկ Թիֆլիսում, կլասիկ գիմնազիայում սովորել հեռավոր և շրջապատի հին կուլտուրական ժողովուրդների մերթ երջանիկ և մերթ արյունոտ պատմությունները, ուրախացել այդ ժողովուրդների հաշտ ու խաղաղ բարեկամությամբ, վշտացել սեփական ու օտար բռնապետների ջանքերով հրահրված կռիվների հետևանքով ժողովուրդների և նրանց ստեղծած կուլտուրաների ոչնչացման համար։

Նրա սուր միտքը, ջերմ սիրտը պատասխաններ էին որոնում բոլոր մեծ մարդկանց հոգին խռովող դաժան հարցերին — որոնք են ժողովուրդներին և նրանց ստեղծած հոյակապ կուլտուրաները ոչնչացնող թշնամանքի ու պատերազմների պատճառները, և որն է այն ուղին, որով գնալով, ժողովուրդները պետք է արգասավորեն և ծաղկեցնեն իրենց հազարամյա կուլտուրայի գոսացած ծառը։

Նա հավատացած էր, որ գիտությունները այդ հարցերին պիտի պատասխան տան, դրա համար էլ իր ստացած կլասիկ գիտելիքներին համապատասխան, ընտրեց Պետերբուրգի պատմա-բանասիրական ֆակուլտետը։

Ուսման և իմաստության ծարավի այդ պատանին Հովսեփ Աբգարի Օրբելին էր, ապագա մեծ արևելագետն ու կովկասագետը։

Իր կրակոտ խառնվածքի մղումով և բազմակողմանի ընդունակություններով նա միատեսակ սիրով ու թափով սկսեց խորանալ միաժամանակ բանասիրական, պատմական, լեզվաբանական և հնագիտական գիտությունների մեջ։

Հ. Ա. Օրբելու փայլուն ընդունակությունները, ջերմ ու անմիջական խառնվածքը, անսահման ու կրքոտ սերը դեպի Արևելքի և հատկապես Կովկասի ժողովուրդների անցյալ կուլտուրան ու պատմությունը, շատ շուտով նրան սիրե-

յի դարձրին իր մեծանուն ուսուցիչներին, որի հետևանքով, դեռևս երկրորդ կուրսի ուսանող, 1906 թ. նա մասնակից դարձավ Անիի պեղումներին։

Հենց այդ ժամանակից էլ սիրելի Անին դարձավ երիտասարդ գիտնականի երկրորդ, գործնական համալսարանը, որտեղ և ձևավորվեցին մեծ գիտնականի հետագա գործունեության բազմազան ծրագրերը և դրանք կատարելու հիմնական մեթոդը. հին կուլտուրական ժողովուրդների անցյալն ուսումնասիրելու միակ ճիշտ ուղին նրանց մտավոր և նյութական ստեղծագործությունների համատեղ և փոխադարձ կապերի ու ազդեցությունների միասնական ուսումնասիրության ուղին է։

Անին դարձավ այն հնոցը, որտեղ կյանքի իրական մնացորդների հետ համեմատվելով, փորձարկվում էին Պետերբուրգի առաջավոր գիտության տեսությունները, այդ գիտնականի մեջ ամրապնդվում է պատմության իմաստությունը — ժողովուրդների կուլտուրական կապերի և ազդեցությունների. կուլտուրական արժեքների ստեղծագործության ասպարեզում ժողովրդական մասսաների խոշորագույն դերի, հին կուլտուրաների վերհանման ասպարեզում նացիոնալիստական սահմանափակվածության վնասակարության մասին և այլն։

Հենց երիտասարդ հասակից էլ Օրբելու անունը սերտորեն կապվում է Անիի հետ։ Երիտասարդ գիտնականը տրամադրության և կրքի մարդ է, նա գիտե հավասար խորությամբ սիրել ու ատել և ում կամ ինչը սիրեց, կնվիրաբերի իր հարուստ մտքի և հոգու բոլոր կարողությունները, անձնուրացարար, անհաշիվ և անվճար։ Հնագիտության և Անիի միջոցով նա ճանաչեց և սիրեց միջնադարյան արևելքի քաղաքական և կուլտուրական կենտրոններից մեկում, Անիում, շերտ-շերտ, կոդր-կոդքի, իրար միաձուլված բազմազգ ժողովուրդների մտքի և նյութական կուլտուրայի արժեքները և դրանց ուսումնասիրության միջոցով սիրեց այն բոլոր ժողովուրդներին, որոնք բնակվել և ստեղծագործել են այդտեղ, բաղաքի հզոր դարպասներից մտել որպես բարեկամներ, կաթվաններով ներս բերել մտքի և ձեռքի հանճարով կերտած արվեստի առարկաներ, և խորը, մեծ կրքով ատեց ժողովուրդների վզին նստած և նրանց դեպի պատերազմ ու ավերածության քշող թագավորներին ու զորավարներին, որոնց կատարած նախճիրների կենդանի վկաներն էին ժողովուրդների տաղանդի ստեղծագործած Անիի ճարտարապետական կիսականգուն կոթողները և նրանց փլատակների տակ թաղված արվեստի և կուլտուրայի մեծարժեք հուշարձանները։

Իրեն հատուկ բուռն եռանդով Օրբելին նվիրվեց արևելքի ժողովուրդների պատմության և կուլտուրայի ուսումնասիրությանը՝ անկախ ազգությունից և կրոնից, փնտռեց, գտավ և ուսումնասիրեց հայ, վրացի, աղվան, պարսիկ, թուրք և բուրդ ժողովուրդների կուլտուրական արժեքները, իր սրաթափանց մտքով որոշեց նրանց ժողովրդական, համաարևելյան բնույթը, սերտ կապերը հարևան և հեռավոր ժողովուրդների կուլտուրաների հետ և յուրաքանչյուրի առանձնահատուկ նշանակությունը իր ժողովրդի և համայն Արևելքի կուլտուրան ճանաչելու, համամարդկային կուլտուրայի ակունքները մեկնաբանելու գործում։

Օրբելու աշխատությունների մի բանիսի վերնագրերի թվարկումն անգամ լավագույն ապացույցն է այդ մասին. հայկական արվեստ, վրացական արվեստ. սասանյան արվեստ, մուսուլմանական արևելք, Ռուսթավելու էպոխայի

հուշարձանները, Սասունցի Դավիթ և բազմաթիվ այլ երկասիրություններ։ Նա ոչ միայն գիտնականի իր աշխատասենյակում նստած էր ուսումնասիրում այդ բոլորը, այլև հնագետի բրիչը ձեռին թափառում էր արևելքի փոշոտ ու հին ճանապարհներով և ամենուր փորում ու փոշիների տակից հանում էր ժողովուրդների ստեղծած արժեքները։ Նույն սիրով ու եռանդով, ինչպես Անիում, նա Վանում, Էրզրումում և Բայազետում ուսումնասիրում էր մուսուլմանական ճարտարապետական հուշարձանները, Վանում պեղում էր ուրարտական թագավոր Սարդուր 2-րդի հռչակավոր տարեգրությունը, Վասպուրականի ձորահովիտներում, Մոկսում ուսումնասիրում էր տեղական բարբառը և բանահյուսությունը, նա սովորում է, բրդերեն լեզուն և կազմում ռուս-բրդերեն բառարան, աննախընթաց թափով ուսումնասիրում հայ ճարտարապետության և կուլտուրայի շտեմարան Աղթամարի տաճարը։

Ակադ. Օրբելին գիտական լայն էրուդիցիայի հետ միասին օժտված է նաև կազմակերպչական խոշորագույն ձիրքով։ Ստանձնելով մեր մեծ Միության պարծանքը կազմող Էրմիտաժ թանգարանի դիրեկտորությունը, նա ահռելի աշխատանք կատարեց ցարական այդ զվարճարանն ու գեղեցիկ առարկաների պահեստը դարձնելու համամարդկային արվեստի թանգարան և մասսաների պատմա-գեղարվեստական դաստիարակության լավագույն օջախ։ «Ընտրյալ և ազնիվ» ժողովուրդների կուլտուրաների կողքին, Օրբելին Էրմիտաժի ընդարձակ դահլիճները լցրեց արևելյան «ստոր» ժողովուրդների կուլտուրական կոթողներով, նա ջնջեց «ազնիվ» և «անազնիվ» ժողովուրդներ ռեակցիոն հասկացողությունը գործնականորեն. արևելքի ժողովուրդների ստեղծած կուլտուրայի մասին իր համոզմունքները նա թանգարանի սրահներում կազմակերպած փայլուն ցուցահանդեսների միջոցով դարձնում էր շոշափելի ու համոզիչ։ Էրմիտաժի հազարի հասնող գիտական և տեխնիկական կոլեկտիվը, նրա ղեկավարությամբ, աշխատում էր լարված ժամացույցի ճշտությամբ և կարճ ժամանակում այն դարձրեց ցարերի ողջ Ձմեռային պալատը և դարձրեց համաշխարհային կուլտուրայի մեծագույն օջախներից մեկը։

Ակադ. Օրբելու տեսական և գործնական աշխատանքները նրա անունը տարածեցին ողջ գիտական աշխարհում, նա դարձավ համաշխարհային կուլտուրական կոնգրեսների ու հորելյանների ոգին. նրա կազմակերպչական փայլուն տաղանդի լավագույն գործերից են Ֆիրդուսու, Շոթա Ռուսթավելու, Նիզամու, Սասունցի Դավթի, Նավոյիի և Պուշկինի հորելյանների փայլուն կազմակերպումը, իվերջո Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմակերպումը և նրա առաջին պրեզիդենտի պատիվը։

Ովքեր բախտ են ունեցել նրա աշխատակիցը լինելու, նրա բազմազան գործունեության որևէ բնագավառում, երբեք չեն կարող մոռանալ այն ստեղծագործական և կազմակերպչական թափը և սերը, որ նա մտցնում էր ամբողջ կոլեկտիվի մեջ, այն անձնուրաց նվիրվածությունը գործին, որով վարակում էր նա իր աշխատակիցներին։ Չենք կարող չհիշել 1936 թ. նրա ղեկավարությամբ կազմակերպված Ամբերդի պեղումները։ Իր շուրջը հավաքած Լենինգրադի և Երևանի մի խումբ երիտասարդ հնագետներ, նա սկսեց Արագածի բարձր լանջում պեղել միջնադարյան Հայաստանի այդ նշանավոր բերդ-գղյակը։ Շրջակա գյուղերից հավաքվեցին մեծ թվով բանվորներ, ամեն հասակի ու հասկացողության տեր մարդիկ, երկու-երեք օրվա ընթացքում գիտական աշխատավորների

և բանվորների այդ մեծ հավաքածուն միաձուլվեց և դարձավ մի համերաշխ և սերտ ընտանիք։ Օրբելին ոչ միայն օրինակելիորեն կազմակերպեց այդ ամայի վայրում բնակարանի ու սննդի գործը, այլև զարմանալի արագությամբ ստեղծեց նրանց համար հանգստի ու զվարճության պայմաններ։ Օրվա ընթացքում նա շրջում էր պեղման բոլոր կետերը, մխրճվում աշխատանքի բոլոր մանրամասների մեջ, թիկունքը դեմ տված, բանվորների հետ շրջում ծանր քարաբեկորներ, աշխատանքից անմիջապես ազատում թեթև տկարություն զգացող բանվորներին, իր անսպառ գրպաններից նախապես գեղորայք ընդունել տալով. նախաճաշի, ճաշի և աշխատանքի վերջի ժամերը լրանալիս չէր հանգստանում մեկ րոպեի ավելորդ աշխատանք. աշխատանքից հետո, հաճախ օրվա փոշիները մաքրած ու ճաշած, բանվորների հետ, մինչև ուշ երեկո, կազմակերպում էր զրույցներ, սիրում էր և պատմել և լսել ժողովրդական զրույցներ. իսկ վերջում, Արագածի թավշապատ բարձրունքներով, հնչում էր ժողովրդական գեղ երգն ու պարը մինչև կես գիշեր։ Նա բանվորներից բաժանվում էր շատ ուշ, հաջորդ օրվա աշխատանքի համար գիտական աշխատավորներին հրահանգներ տալու ու քնելու։

Մի քանի օրվա ընթացքում այդ բազմազան մարդկային հավաքածուն դարձավ նահապետական ընտանիք, որն իր ղեկավարին տվեց «Հայրիկ» սիմվոլիկ անունը։

* * *

Մեծ գիտնականի և իսկական մարդու կողքին ակադ. Օրբելու հոգու մեջ նստած է և մեծ ուսուցիչը։ Աշակերտները սովորական ուսուցչին պատկերացնում են դասարանում, ուսանողները՝ լսարանում և գիտնականները՝ գրքի մեջ, բայց այդ ամենը դեռևս իսկական ուսուցչի և Օրբելու տիպը չեն. Օրբելին ուսուցիչ է լսարանում, գրքերում, փողոցում, տանը, ճանապարհին և պեղման վայրերում։ Նրա սիրած աշակերտները նրա տան մոտիկ և մշտական այցելուներն են, մոտիկ և հեռավոր ճամբորդությունների ուղեկիցները, ամենօրյա զրույցների ունկնդիրները. նա ոչ միայն սիրում է իր աշակերտներին, այլ սիրահարված է նրանց, ձգտում է ամենուր և ամեն ինչ տալ նրանց, հետևում է նրանց ստեղծագործական կյանքի բոլոր քայլերին, խնամում հոր պես, հոգ տանում նրանց աշխատությունների տպագրության և աշխատանքի պայմանների ստեղծման համար։ Ով եղել է նրա աշակերտ և սիրվել նրանից, գիտե, որ ընդմիշտ ունի մի հայր և ուսուցիչ, որի միտքը, սիրտը և խնամքը հետևում են իրեն ամեն տեղ։ Մեկ բառով ու նախադասությամբ արտահայտած նրա մտքերը նրա աշակերտների համար դարձել ու դառնում են ստեղծագործական աշխատանքի ուղեցույցներ, գիտական թեմաներ և հաստ գրքերի աղբյուրներ։ Ակադ. Օրբելին ուսուցիչ է, այդ բառի ամենալայնագույն և կատարյալ իմաստով։

Ակադ. Օրբելին մեծ հայրենասեր է և քաղաքացի. Լենինգրադի հազարավոր բնակիչներ հիշում են նրա կրակոտ ճառը գործարաններում և ռադիոյով, ֆաշիստական շրջապատման ծանր օրերին, Էրմիտաժի աշխատակիցները զարմանքով են պատմում այն անխոնջ, անքուն գիշերների մասին, երբ այդ մեծ մարդը կազմակերպում էր Էրմիտաժի համաժողովրդական արժեքների մեծա-

զուլն զանձերը ֆաշիստական բանդաներից փրկելու գործը, մեր Հայրենիքի հեռավոր և ապահով նկուղներում թաքցնելու համար Ով ո՞վ կարող է մոռանալ համամարդկային վշտով ու ափսոսանքով լցված նրա մեղադրական ճառը Նյուրնբերգի պրոցեսում՝ ուղղված մարդկության և ժողովուրդների թշնամի ֆաշիստների կուլտուրասպան քաղաքականության դեմ։

Թվել ակադ. Օրբելու մեծ ծառայությունները արևելագիտություն, կովկասագիտություն և հատկապես հայագիտություն, մի հակիրճ հոդվածով, անհնարին է և մի մարդու կարողությունից վեր, բայց կուզենայինք մի քանի խոսքով կանգ առնել նրա հիմնադրած մի կարևոր ձեռնարկության վրա. դա հայկական արձանագրությունների հավաքման, մշակման և հրատարակման գործն է։

Անհում աշխատելու սկզբից Օրբելու ուշադրությունը գրավեցին հուշարձանների վրա սփռված հարուստավոր վիմական արձանագրություններ։ Հրատարակությունների հետ կատարած թռուցիկ համեմատությունը համոզեց նրան, որ պատմա-կուլտուրական մեծ արժեք և սկզբնաղբյուր հանդիսացող այդ դոկումենտները հրատարակությունների մեջ մեծ չափով անճիշտ են, աղավաղված։

Հենց այդ ժամանակից էլ նրա սիրտ առարկան դարձան հայկական արձանագրությունները և նրանց հավաքման ու հրատարակման գիտական մեթոդների մշակման հարցերը։ Թերևս գիտական որևէ բնագավառ, որին ձեռնամուխ է եղել Օրբելին, այնքան տեսականորեն չի մնացել նրա ուշադրության կենտրոնում, ինչպես այդ։

19-րդ դարի գիտացան միտքը հին ժողովուրդների պատմության և կուլտուրայի ուսումնասիրության սկզբնաղբյուրների վրա ավելացրել էր նաև այդ ժողովուրդների թողած բազմազան հուշարձանների վրա եղած արձանագրությունները. Եվրոպայի գիտնականները հավաքել և հրատարակել էին հունական, լատինական, սեմական ժողովուրդների արձանագրությունների լրիվ ժողովածուները։

Հայկական բազմահազար արձանագրությունները ևս հավաքվել և հրատարակվել էին. բայց թե՛ հավաքման, և թե՛ հրատարակման մեթոդները հեռու էին ժամանակակից գիտության պահանջներից։ Հայկական արձանագրություններով զբաղվողների մեծ մասը եղել էին ճանապարհորդներ ու տեղագիր հետազոտներ, որոնք բնարել էին միայն ակնառու պատմական դեմքեր ու երևույթներ նշող արձանագրությունները. այդ հավաքածուներն էլ ենթարկվել էին աղավաղումների, նրանց մեջ չէին պահպանվել լեզվական, ուղղագրական և այլ առանձնահատկությունները, որի շնորհիվ նրանց գիտական արժեքը խիստ նվազ էր։

Երիտասարդ լեզվաբան, բանասեր և պատմաբան Օրբելին անմիջապես նկատեց, թե հայ արձանագրությունների հավաքման և հրատարակման որակը որքան ցածր է եվրոպացիների կատարած աշխատանքի համեմատությամբ։ Նա մշակեց հավաքման և հրատարակման նոր մեթոդ, որի էությունն այն էր, որ տպագրված արձանագրությունը իր բոլոր մանրամասնություններով պիտի արտահայտեր քարերի վրա գրվածի պատկերը, տառաձևերը, տառերի միացումները, սղումները, թերականական և ուղղագրական առանձնահատկությունները. մի խոսքով ամեն ինչ տալ այնպես, ինչպես նրանք կան իրականում և բոլոր

վերծանումներին կցել արձանագրությունների լուսանկարները, որպես ստուգող փաստաթղթեր։

Այդ մեթոդով հրատարակությունն ուներ շատ դժվարություններ, որոնցից ամենագլխավորը հատուկ շրիֆտ ստեղծելն էր. պետք էր այնպիսի տառաձևեր ստեղծել, որոնցով հնարավոր լիներ արտահայտել արձանագրական գրչության առանձնահատկությունները, իսկ դրա համար հարկավոր էր նախապես ուսումնասիրել այդ առանձնահատկությունները, պարզել տառերի միացումների բոլոր հնարավոր տեսակները, պատրաստել դրանց գծագրությունները և ձուլել տպագրական յուրահատուկ շրիֆտ։ Անխոնջ գիտնականը պատվով կատարեց այդ դժվարին գործը։ Յուրաքանչյուր գործի բոլոր մանրամասնությունների և տեխնիկական առանձնահատկությունների մեջ խորամուխ լինելու իր խառնվածքի շնորհիվ, ամիսներով մխրճված Լենինգրադի Ակադեմիայի ներքնահարկ ու խոնավ տպարանում, սովորում էր դրաշարական գործը, փորձում իր ստեղծած տառաձևերի պիտանիությունը և կատարելագործում այն. այդ բոլորի արդյունքն եղավ այն, որ սկսեցին աստիճանաբար լույս տեսնել Անիից և Անիի շրջապատից հավաքած նրա արձանագրությունները մամուլում և առանձին պրակներով՝ իր մշակած մեթոդով և տպարանում շարված իր ձեռքով։ Ականատեսները, որոնցից շատերը կենդանի են, զարմանքով են պատմում նրա համառության և իր սիրած աշխատանքի սև գործի մեջ մխրճվելու հիվանդության մասին. դա ստեղծագործական հիվանդություն է, որ հատուկ է միայն մեծ գիտնականներին։

Պատմության ընթացքում հայ ժողովրդի ստեղծագործած կուլտուրական արժեքները, չար բախտի բերումով, պարբերաբար, ոչնչացման են ենթարկվել, այդ բախտին արժանացավ նաև նրա որդու՝ ակադ. Օրբելու ստեղծած արձանագրական շրիֆտը. 1924 թ. ափերից Նևայի դուրս հորդած ջրերը լցվեցին Ակադեմիայի տպարանը և ուրիշ արժեքների հետ տարան-ոչնչացրին այդ շրիֆտը։ Սակայն Փյունիկ հավքի նման հայ ժողովուրդը բոլոր տեսակի ավերածություններից հետո դիտե միշտ նորից հառնել և լծվել ստեղծագործական աշխատանքի։ Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի հետևանքով նոր կյանք առած մեր ժողովուրդը ուրիշ կուլտուրական նվաճումների շարքում ձեռնամուխ է եղել նաև այդ կորստի վերականգնմանը։ Ակադ. Օրբելու մշակած մեթոդներով այժմ նրա դաստիարակած աշակերտներն են աշխատում։

Այս տարի լրանում է մեծատաղանդ գիտնականի, մարդու, ուսուցչի, բազաբաղու պայծառ կյանքի 70 տարին, մեր մեծ երկրի բազմաղգ ժողովուրդները, գիտնականները, ամբողջ աշխարհի արևելագետները երախտագիտության մեծ զգացում, ջերմ խոսքեր կրերեն ալեհեր գիտնականին. իսկ մենք, Հայաստանի նրա աշակերտներս, քսանամյա և հիսունն անց, անձամբ թե հեռվից կդրկենք մեծ հայրենակցին և աննման ուսուցչին, կհամբուրենք նրա երախտավոր ձեռքը և երկար, շատ երկար տարիների կյանք ու առողջություն կմուղթենք նրան։